

ՏԵՂԵԿԱՆՔ

ԼՂՀ արդարադատության նախարարության 2012 թվականի աշխատանքային գործունեության մասին

ԼՂՀ արդարադատության նախարարության և նրա ստորաբաժանումների կողմից 2012 թվականին որոշակի աշխատանք է կատարվել համակարգի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման ուղղությամբ:

2012 թվականին նախարարության կարևոր խնդիրն է հանդիսացել բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը և համակարգի ստորաբաժանումների գործունեության բարելավումը:

Շարունակվել է գործունեությունը ԼՂՀ օրենսդրության կատարելագործման, իրավակիրառական պրակտիկայի բարեփոխման և նախարարությունում տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ:

ԼՂՀ արդարադատության նախարարության և նրա մեջ ընդգրկված ստորաբաժանումների կողմից 2012թ. հոգուտ պետական բյուջեի գանձվել է 83.477.135 (78.998.672) դրամ գումար: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի օգտին գանձված գումարը աճել է 4.478.463 դրամի չափով:

ԼՂՀ արդարադատության նախարարության համակարգում ընդգրկված ստորաբաժանումների գործունեությունն ըստ ոլորտների ունի հետևյալ պատկերը.

1. Նախարարությունում ստացված փաստաթղթերի շրջանառության, քաղաքացիների դիմումների և բողոքների քննարկման ոլորտ

Հաշվետու ժամանակահատվածում ԼՂՀ արդարադատության նախարարությունում մուտքագրվել է 4478 (3555) փաստաթուղթ, որից 71-ը (71)՝ քաղաքացիների դիմում-բողոքներ:

Նշված բոլոր դիմումները, նամակ-գրություններն օրենքով սահմանված կարգով ընթացքավորվել են:

Առօրյա բնույթ է կրել քաղաքացիների ընդունելությունը, նրանց իրավական օգնություն ցուցաբերելու աշխատանքները:

Աշխատանք է տարվել բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձանց և նրանց առաջին հերթի ժառանգներին պարզաբանումներ տալու, ստացված դիմումները հաշվառելու և ընթացքավորելու, համապատասխան կարգավիճակ ստացած անձանց վկայականներ տրամադրելու ուղղությամբ: ԼՂՀ արդարադատության նախարարությունում հրավիրվել և անց է կացվել բռնադատվածների հարցերով զբաղվող հանձնաժողովի 3 (4) նիստ, որի արդյունքում 14 (19) քաղաքացու շնորհվել է բռնադատվածի կարգավիճակ և տրվել համապատասխան վկայական: Ներկա դրությամբ հանրապետությունում 258 քաղաքացի ունեն բռնադատվածի, իսկ 21-ը՝ բռնադատվածի առաջին հերթի ժառանգի կարգավիճակ:

2012թ. քաղաքացիներից ստացված դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում ԼՂՀ արդարադատության նախարարի հրամանով դատավորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

2. Կադրային քաղաքականության և անձնակազմի կառավարման ոլորտ

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանք է տարվել կադրերի ընտրության, նրանց ստաժավորման, ատեստավորման և որակավորման բարձրացման կազմակերպման ուղղությամբ:

Այսպես, ԼՂՀ արդարադատության նախարարությունում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար օրենքով սահմանված կարգով կազմակերպվել և անց է կացվել 2 մրցույթներ:

Անհրաժեշտ կազմակերպչական աշխատանքներ են կատարվել նախարարության աշխատակազմի 3 քաղաքացիական ծառայողների ատեստավորումն անցկացնելու համար: Կազմակերպվել և անց է կացվել նաև 7 հարկադիր կատարողների ատեստավորում:

ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհրդին է տրամադրվել աշխատակազմի վերապատրաստման և ատեստավորման ենթակա քաղաքացիական ծառայողների տարեկան հայտը և գլխավոր, առաջատար ու կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերը:

Աշխատակազմում համակարգչային նոր տեղեկատվական համակարգերի ներդրման կապակցությամբ ուսուցում անցկացնելու նպատակով աշխատակազմի մի շարք աշխատակիցներ գործուղվել են ՀՀ համապատասխան մարմիններ:

2012 թվականի արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնական միջոցառումների պլանի համաձայն **ԼՂՀ** փրկարար ծառայության հետ համատեղ նախարարության աշխատակազմում անց է կացվել քաղաքացիական պաշտպանության օբյեկտային վարժանքի ուսումնավարժություն:

Հաշվետու ժամանակաընթացքում նախարարի հրամանով մի շարք աշխատողների շնորհվել են հերթական դասային և հատուկ կոչումներ, իսկ երկու աշխատակցի նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժի միջոցներ:

Աշխատանքի պրակտիկ գործունեությունը կազմակերպելու և կանոնակարգելու նպատակով արձանագրվել են նախարարի 180 (206) և աշխատակազմի ղեկավարի 204 (204) հրամաններ:

3. Իրավական ակտերի նախագծերի մշակման, փորձաքննության և պաշտոնական հրապարակման ոլորտ

2012թ. նախարարության կողմից մշակվել են **ԼՂՀ** 1 (1) օրենսգրքի, 11 (23) օրենքների, **ԼՂՀ** նախագահի 1 հրամանագրի, **ԼՂՀ** կառավարության 13 (13), **ԼՂՀ** վարչապետի 1 որոշումների և 9 (5) գերատեսչական նորմատիվ ակտերի նախագծեր:

Պետական իրավական փորձաքննության են ենթարկվել և համապատասխան եզրակացություններ ու առաջարկություններ են տրվել 556 (722) օրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ, որոնցից

41-ը՝ (69) **ԼՂՀ** օրենքների,

505-ը՝ (636) **ԼՂՀ** կառավարության որոշումների և

10-ը՝ (17) **ԼՂՀ** վարչապետի որոշումների նախագծեր:

Ստուգվել և պետական գրանցման են ենթարկվել 152 (132) գերատեսչական նորմատիվ իրավական ակտեր, իսկ 9-ի (12) գրանցումը մերժվել է՝ **ԼՂՀ** գործող օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու հանգամանքներով պայմանավորված:

Պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման են ենթարկվել տեղական ինքնակառավարման մարմինների 229 (235) նորմատիվ իրավական ակտեր, իսկ 5-ի (1) գրանցումը մերժվել է՝ **ԼՂՀ** գործող օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու հանգամանքներով պայմանավորված:

Օրենքով սահմանված կարգով հաշվառվել, համակարգվել և պահպանվել են 2012 թվականին ստացված **ԼՂՀ** իրավական ակտերի պաշտոնական օրինակները:

2012 թվականի ընթացքում հրատարակվել են «**ԼՂՀ** պաշտոնական տեղեկագրի» 30 (28), «**ԼՂՀ** գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի» 21 (18) ու «Քաղաքային և գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածուի» 8 (7) համարներ, որոնց մի մասը բաշխվել է պետական պատվերի շրջանակներում, իսկ մնացածը՝ բաժանորդագրման կամ ազատ իրացման կարգով: Ազատ կարգով իրացվել է 633 (700) տեղեկագիր, որից ստացված 955.856 (1.171.252) դրամ գումարը փոխանցվել է պետական բյուջե:

Ի կատարումն **ԼՂՀ** Նախագահի նախընտրական հանդիպումների ընթացքում տրված հանձնարարականի չէ արդարադատության նախարարության և «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերության հետ համագործակցության շնորհիվ մեկնարկել է **ԼՂՀ**-ում անվճար իրավական տեղեկատվական համակարգի ներդրման աշխատանքները: **ԼՂՀ** իրավական տեղեկատվական համակարգը իրենից կներկայացնի որոնողական համակարգ, որում կընդգրկվեն **ԼՂՀ** օրենքների և այլ իրավական ակտերի հավաքածուն, նրանցում կատարված բոլոր փոփոխություններով եւ լրացումներով: Նշված համակարգի ներդրումը հնարավորություն կտա հանրությանը անվճար, ինտերնետ կայքի միջոցով, ծանոթանալ երկրում գործող իրավական ակտերի ժամանակային տարբերակներին, որոնել անհրաժեշտ նորմատիվ ակտերն ու դրանց փոփոխությունները՝ ըստ ակտի անվանման, ընդունման մարմնի, ժամանակի, պարունակվող բառերի և այլն:

2012 թվականի ընթացքում շարունակվել է գործունեությունը մաս դատաիրավական համակարգի բարեփոխման ուղղությամբ: Մշակվել և ընդունման է ներկայացվել «**ԼՂՀ** քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «**ԼՂՀ** դատական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»: Մշակվել և ներկայումս շրջանառության մեջ է գտնվում **ԼՂՀ** քրեական օրենսգրքի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» **ԼՂՀ** օրենքի նախագիծը:

Հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացման նպատակով 2012 թվականի ընթացքում նախարարության աշխատակիցները մասնակցել են տարբեր համայնքներում և ուսումնական հաստատություններում կազմակերպված միջոցառումներին՝ հանդես գալով **ԼՂՀ** Սահմանադրությանը, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին, ազատություններին և պարտականություններին վերաբերող, ինչպես նաև անչափահասների պատասխանատվությանն առնչվող ելույթներով:

4. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման կազմակերպում

Հաշվետու ժամանակահատվածում նախարարության կողմից ընթացավորվել են 261 (182) հարցումներ, տրվել են ընտանեկան կարգավիճակի մասին 162 (76) տեղեկանքներ և օտարերկրյա քաղաքացիների ամուսնության գրանցման 27 (21) թույլտվություններ: Հաստատվել են ակտերի գրանցման վերականգնման, անվան, ազգանվան, հայրանվան փոխման և ակտերի գրանցման ուղղման, փոփոխման և լրացման վերաբերյալ 169 (150) եզրակացություններ:

ԼՂՀ շրջանային /քաղաքային/ ՔԿԱԳ բաժինների կողմից 2012թ. կատարվել են 5.032 (5.392) քաղաքացիական կացության ակտային գրանցումներ: Բացի այդ, տրվել են 1.349 /1.110/ կրկնօրինակ վկայականներ և 1.252 (998) տեղեկանքներ՝ ակտային գրանցումների առկայության կամ բացակայության մասին:

Քաղաքացիական կացության ակտային գրանցումների ընդհանուր քանակից
 2.521-ը (2.599) վերաբերում է ծննդյան,
 1.232-ը (1.297)՝ մահվան,
 872-ը (939)՝ ամուսնության,
 147 -ը՝ (169) ամուսնալուծության,
 173-ը (212)՝ հայրության հաստատման,
 6-ը (6)՝ որդեգրման,
 34-ը (36)՝ անվան, հայրանվան, ազգանվան, փոխման,
 125-ը (92)՝ ուղղման և
 47-ը (42)՝ ակտային գրանցումների վերականգնմանը:

2012 թվականին նախորդ տարվա համեմատությամբ 78-ով նվազել է ծննդյան, 65-ով մահվան, 67-ով ամուսնության, 22-ով ամուսնալուծության պետական գրանցումները:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցումը ըստ ՔԿԱԳ տարածքային բաժինների պատկերվում է հետևյալ կերպ.

ՔԿԱԳ բաժնի անվանումը	ծնունդ	մահ	ամուսնալուծություն	ամուսնալուծություն	հայրության ճանաչում	որդեգրում	ուղում	ա.ա.հ փոփոխում	ակտի վերականգնում	տեղեկանք	կրկնօրինակ	ծանուցում	ընդամենը	պետ. տուրք
Ստեփանակերտ	1.054	402	361	75	75	5	53	25	11	496	404	1	2.962	3.565.400
Ասկերան	245	167	91	17	14	-	40	2	5	140	129	-	850	971.900
Մարտակերտ	352	233	106	8	28	-	15	-	14	332	375	-	1.463	1.897.100
Մարտունի	337	230	111	17	13	-	4	2	7	123	268	-	1.112	1.239.500
Հաղրոթ	180	118	65	8	10	-	3	2	2	87	112	2	589	662.300
Շուշի	76	28	28	8	1	-	4	1	2	59	15	-	222	272.200
Շահումյան	50	11	31	4	4	-	-	1	2	9	2	14	128	147.800
Քաշաթաղ	227	43	79	10	28	1	6	1	4	6	44	10	459	380.300
Ընդամենը	2.521	1.232	872	147	173	6	125	34	47	1.252	1.349	27	7.785	9.136.500

Հանրապետական ՔԿԱԳ արխիվի կողմից 2012թ. տրվել են 102 (116) վկայականների կրկնօրինակներ, այդ թվում՝ 76-ը ծննդյան (82), 8-ը՝ մահվան (10), 17-ը՝ ամուսնության (22), ինչպես նաև ակտային գրանցումների բացակայության մասին 531 (573) տեղեկանքներ, որի դիմաց գանձվել է 228.000 (238.000) դրամ պետտուրք:

Կատարված գործառնությունների դիմաց ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության կենտրոնական մարմնի, հանրապետական ՔԿԱԳ արխիվի և ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից հօգուտ պետական բյուջեի գանձվել է 9.517.000 (7.799.700) դրամ պետական տուրք, ինչը 1.717.300 դրամով ավել է նախորդ տարվա գումարից:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության և «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համագործակցության արդյունքում՝ ՔԿԱԳ տարածքային բաժիններում իրականացվող գործընթացները ավտոմատացնելու, կատարվող աշխատանքների առավել հարմարավետությունը և արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև քաղաքացիների արագ սպասարկումն ապահովելու նպատակով լրամշակվել և ներդրվել է ՔԿԱԳ բաժինների էլեկտրոնային կառավարման նոր համակարգը, ինչպես նաև ՔԿԱԳ բաժինների աշխատակիցների հետ անց են կացվել համապատասխան ուսումնական դասընթացներ:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտում վարչարարության արդյունավետությունը բարձրացնելու և վարչարարության ժամկետները կրճատելու նպատակով «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ԼՂՀ օրենքում նախատեսված համապատասխան փոփոխությունների արդյունքում կրճատվել է ամուսնության գրանցման ժամկետը՝ նախկինում սահմանված մեկամսյա նվազագույն ժամկետի փոխարեն սահմանելով տասնօրյա նվազագույն ժամկետ:

5. Նոտարական գործունեության կազմակերպում

2012 թվականի հոկտեմբերի 1-ից նոտարիատի բնագավառում ներդրվել է վճարովի ծառայությունների մատուցման համակարգ: ԼՂՀ կառավարության համապատասխան որոշմամբ նոտարներին իրավունք է վերապահվել իրավաբանական և ֆիզիկական անձանց համար մատուցել 9 տարատեսակ իրավական և տեխնիկական բնույթի լրացուցիչ ծառայություններ, որոնք թեև փոխկապակցված են նոտարական գործողությունների հետ, սակայն չեն հանդիսանում նոտարական գործողություններ և չեն մտնում օրենքով նախատեսված նոտարի պարտականությունների մեջ: Նոտարական վճարովի ծառայություններից գոյացած արտաբյուջետային միջոցները ուղղվում են ինչպես նոտարական գրասենյակների աշխատողների նյութական խրախուսմանը, այնպես էլ ԼՂՀ-ում նոտարական համակարգի զարգացմանը:

Շրջանային պետական նոտարների ժամանակավոր բացակայության դեպքում նոտարական գրասենյակների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով մշակվել և ԼՂՀ կառավարության միջոցով ԼՂՀ Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվել «Նոտարիատի մասին» ԼՂՀ օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը: Համաձայն առաջարկվող օրենսդրական փոփոխությունների շրջանային նոտարի ժամանակավոր բացակայության դեպքում նրա պարտականությունների կատարումը հնարավոր է լինելու վերապահել նոտարի պաշտոնում նշանակման համար օրենքով նախատեսված պահանջներին համապատասխանող նոտարի օգնականի վրա:

Նոտարական վիճակագրության ամփոփման և պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ԼՂՀ նոտարական գրասենյակների կողմից 2012թ. կատարվել են 21.016 (21.047) նոտարական գործողություններ, որոնց դիմաց գանձվել է 24.484.900 (25.555.600) դրամ պետական տուրք, իսկ վճարովի ծառայությունների դիմաց նախարարության արտաբյուջետային հաշիվ է մուտքագրվել 3.063.500 դրամ: 2011թ. համեմատությամբ նոտարական գործողությունների քանակը նվազել է 31-ով, իսկ պետական տուրքը՝ 1.070.700 դրամով:

Ըստ տեսակների 2012թ. ԼՂՀ նոտարական գրասենյակներում կատարվել են հետևյալ նոտարական գործողությունները.

- պայմանագրերի վավերացում – 6.439 (7.026)
- կտակների հաստատում - 208 (247)
- տրվել են սեփականության իրավունքի վկայագրեր - 20 (18)
- տրվել են ժառանգության իրավունքի վկայագրեր - 692 (774)
- լիազորագրերի հաստատում - 2.799 (2.702)
- փաստաթղթերի պատճենների և դրանց քաղվածքների հաստատում - 793 (967)
- փաստաթղթերի թարգմանության իսկության վավերացում - 4.874 (4271)
- այլ նոտարական գործողություններ - 5322 (5042):

Ըստ նոտարական տարածքների նոտարական գործողությունների կատարումը պատկերվում է հետևյալ կերպ.

NN	Նոտարական գործողության տեսակը	Նոտարական տարածքի անվանումը									Պետական տուրք	
		Մտեփա նակերտ N 1	Մտեփա նակերտ N 2	Ասկե- րան	Մար- տա- կերտ	Մար- տունի	Հադ- րոթ	Շուշի	Շա- հուն- յան	Քաշա- քաղ		Ընդամ ենը
1	Անշարժ գույքի օտարման պայմանագրերի վավերացում	368	817	454	164	331	174	119		191	2618	7.962.000
2	Անշարժ գույքի վարձակալության պայմանագրերի վավերացում	44	113	160	29	372	128	18		150	1014	1.224.000
3	Անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրերի վավերացում	4	23	11	4	4	4	4		4	58	207.500
4	Անշարժ գույքի վերաբերյալ այլ պայմանագրերի վավերացում՝ բացի գրավից	68				35	2			26	131	299.500
5	Գրավի պայմանագրերի վավերացում	348	538	216	70	227	76	59		14	1548	1.079.000
6	Շարժական գույքի վերաբերյալ պայմանագրերի վավերացում	193	106	21	7	16	4	13		3	363	1.768.000
7	1-7 կետերում չնշված այլ պայմանագրերի վավերացում	49	487	100	24	11	5	26		5	707	1.463.000
8	Կտակների վավերացում	81	26	24	19	28	23	6		1	208	416.000
9	Լիազորագրերի վավերացում	955	636	202	150	242	166	129	5	314	2799	3.580.500
10	Այլ գործարքների վավերացում											
11	Ժառանգության իրավունքի վկայագրերի տրամադրում	194	130	119	60	111	46	23		9	692	874.000
12	Ընդհանուր գույքից հասանելիք բաժնի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագրերի տրամադրում	4	15				1				20	40.000
13	Փաստաթղթերի պատճենների կամ դրանց քաղվածքների իսկության վավերացում	246	212	75	34	137	35	42	1	11	793	399.900
14	Փաստաթղթերի վրա եղած	2148	1011	409	205	913	315	130	3	54	5188	2.727.000

	ստորագրությունների իսկության վավերացում												
15	Փաստաթղթերի թարգմանության իսկության վավերացում	3734	313	286	127	208	125	63		18	4874	2.438.500	
16	Քաղաքացու ողջ լինելու փաստի հաստատում			3							3	6000	
	Ընդամենը՝	8436	4427	2080	893	2635	1104	632	9	800	21016	24.484.900	

6. Պետական ռեզիստրի գործունեության կազմակերպում

Հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցման են ենթարկվել 108 (100) առևտրային և 25 (32) ոչ առևտրային տիպի իրավաբանական անձ, 8-ը (4) իրենց կարգավիճակը և հիմնադիր փաստաթղթերը համապատասխանեցրել են քաղաքացիական օրենսդրության պահանջներին (վերագրանցվել են), 264 (278) հիմնադիր փաստաթղթերի փոփոխությունները սահմանված կարգով գրանցվել են (ստացել են ընթացիկ գրանցում), 11-ը (33) գործունեությունը դադարեցվել են, տրամադրվել է պետական գրանցման 3 (10) վկայականի կրկնօրինակ:

Սահմանված կարգով պետական հաշվառման են վերցվել 6 (8) իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում և հիմնարկ, 15-ը (32) ստացել ընթացիկ պետական հաշվառում:

Հաշվառվել են նաև 819 (724) անհատ ձեռնարկատեր, 3-ը (6) վերահաշվառվել, 25-ը (22)՝ ստացել ընթացիկ գրանցում, 15-ի (27) գործունեությունը դադարեցվել է, տրամադրվել է պետական հաշվառման վկայականի 7 (9) կրկնօրինակ:

Ըստ ստորաբաժանումների գրանցման գործընթացը պատկերվում է հետևյալ կերպ.

Ստորաբաժանումը	իրավաբանական անձ				իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանում և հիմնարկ				անհատ ձեռնարկատեր				ընդամենը	պետ. տուրք (հազ. դրամ)
	սկզբ	վերա գ.	ընթ.	լուծ. (դադար.)	սկզբ.	վերահ աշ.	ընթ.	լուծ.	սկզբ.	վեր ահ	ընթ.	գործ. դադար		
Կենտրոնական մարմին	24	3	15	4դ									46	360
Ստեփանակերտ	90	4	182/1կ	3	5		11		471	2	22/4կ	12	807	4233
Ասկերան	6		21				1		63	1			92	421
Հաղրուք			4	2	1				37		1կ		45	153
Մարտակերտ	6		11						62		1կ	1	81	359
Մարտունի	2	1	17	1					100		3/1կ	2	127	448,5
Շուշի	1		6/2կ						56				65	267
Քաշաթաղ	4		8	1			3		30				46	220
Ընդամենը	133	8	264/3կ	11	6		15		819	3	25/7կ	15	1309	6461,5

Պետական ռեզիստրի կենտրոնական մարմնի կողմից գրանցվել են նաև 124 (109) ֆիրմային անվանումներ, այդ թվում 1-ը (2)՝ հատուկ թույլտվություն պահանջող, որի համար գանձվել է 600.000 դրամ պետական տուրք:

Պետական միասնական գրանցամատյանից տրվել են 737 (776) տեղեկանքներ:

Վերը նշված գրանցումների դիմաց գանձվել է 7.798.500 դրամ պետական տուրք (8.620.000):

Հաշվետու ժամանակահատվածում գանձվել է հատուկ թույլտվություն պահանջող ֆիրմային անվանումների օգտագործմամբ պայմանավորված 9.000.000 (8.400.000) դրամ տարեկան պետական տուրք և 1 իրավաբանական անձի տարեկան պետական տուրքի պարտավորության ժամանակին չկատարմամբ պայմանավորված 36.000 (3.000) դրամ հաշվարկված տույժ, որի հաշվակցմամբ հաշվետու ժամանակահատվածում իրավաբանական անձանց պետական ռեզիստրի գործակալության կողմից գանձվել է ընդամենը 16.834.500 (17.023.000) դրամ պետական տուրք:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գանձված պետական տուրքի գումարը նվազել է 188.500 դրամի չափով:

7. Դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտ

Հաշվետու ժամանակահատվածում հաստատվել է 2012-2013 թթ. ՀՀ ԱՆ ԳԱՀԿԱ եւ ԼԳՀ ԱՆ ԳԱՀԿԱ ծառայությունների միջև համագործակցության միջոցառումների ծրագիրը:

Հարկադիր կատարման ծառայության կողմից պարտապանի գույքն աճուրդով իրացնելու աշխատանքները, ինչպես նաև դրանց հրապարակայնությունը և թափանցիկությունը բարելավելու նպատակով մեկնարկել է ծառայությունում էլեկտրոնային եղանակով հարկադիր աճուրդի կազմակերպման և անցկացման համակարգի ներդրման աշխատանքները: Համակարգի ներդրման արդյունքում աճուրդին մասնակցելու ցանկություն հայտնած անձինք (այդ թվում՝ շրջաններում և արտերկրում բնակվողները) անկախ իրենց գտնվելու վայրից հնարավորություն կունենան մասնակցել աճուրդի գործընթացին: Աճուրդում հաղթողը որոշվելու է էլեկտրոնային համակարգի միջոցով՝ բացառելով սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը:

2012թ. դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության աշխատակիցների վարույթում գտնվել են 5163 (4190) կատարողական վարույթներ, այսինքն՝ նախորդ տարվա համեմատությամբ կատարողական վարույթների քանակը ավելացել է 973-ով կամ 23.2 տոկոսով:

Նշված կատարողական վարույթներից փաստացի կատարման հիմքով կարճվել է 1778 (1601), ավարտվել է 1333 (1046), կասեցվել է 198 (177), ուղարկվել ըստ տարածքային կատարման՝ 848 (516) կատարողական վարույթ: Անավարտ վարույթների մնացորդը կազմել է 1162 (1027):

Բոլոր կատարողական վարույթներով բռնագանձվելիք արժեքների ընդհանուր գումարը կազմել է 2.436.105.541 (3.790.871.945) դրամ, այդ թվում պետության օգտին՝ 1.935.405.392 (1.338.656.093) դրամ:

Փաստական գանձման է ենթարկվել 766.014.008 (1.551.562.200) դրամ, այդ թվում պետության օգտին՝ 31.684.879 (27.449.120) դրամ, ֆիզիկական անձանց օգտին՝ 316.622.360 (232.392.228) դրամ, իրավաբանական անձանց օգտին՝ 417.706.769 (1.291.720.852) դրամ:

Տարածքային կտրվածքով բռնագանձման ենթակա և բռնագանձված արժեքների ընդհանուր գումարը հետևյալն է.

Տարածքները	բռնագանձման ենթակա գում. հաշվետու ժ/2 սկզբում	բոլոր կ/վ բռնագանձ գումարը	պետության օտին բռնագանձ գումարը	ֆիզ.անձ. օտին բռնագանձ գումարը	իրավ. անձ. օտին բռնագանձ գումարը	չվերականգ. մնացորդ գումարը
1	2	3	4	5	6	7
Ստեփանակերտ	1999273349	529860786	15405433	215160795	299294558	1469412563
Ասկերան	83436472	41902287	2850883	4376890	34674514	41534185
Մարտակերտ	59199799	52698354	3872174	32559268	16266912	6501445
Մարտունի	199756868	73520636	1592395	27904485	44023756	126236232
Հարյուք	50761449	40076222	6181055	27963165	5932002	10685227
Շուշի	23443160	17684087	153098	4097834	13433155	5759073
Քաշաթաղ	12613425	6876178	986000	3498057	2392121	5737247
Շահումյան	7621019	3395458	643841	1061866	1689751	4225561
ԼՂՀ	2436105541	766014008	31684879	316622360	417706769	1670091533

Չբռնագանձված գումարի չափը կազմում է 1.670.091.533 (2.239.309.745) դրամ, այդ թվում պետության օգտին՝ 1.169.391.384 (1.311.206.973) դրամ:

Ինչպես երևում է վիճակագրական տվյալներից, նախորդ տարվա համեմատությամբ ընդհանուր բռնագանձված գումարի չափը նվազել է 785.548.192 դրամով, իսկ պետության օգտին՝ բռնագանձված գումարի չափը աճել է 4.235.759 դրամով:

8. Դատական փորձաքննությունների լաբորատորիա

2012 թվականին փորձաքննությունների կատարման համար դատական փորձաքննությունների լաբորատորիայում գրանցվել են 214 (324) մուտքեր՝ ներառյալ 2011 թվականից փոխանցված 15 մուտքերը: 2011թ. համեմատությամբ մուտքերի թիվը նվազել է 110-ով: Հիմնականում մուտքերի նվազումը գրանցված է ԼՂՀ ոստիկանության մարմիններից՝ 104-ով, դատարաններից՝ 9-ով:

Ըստ նախաձեռնողների մուտքերի բաշխվածության պատկերը հետևյալն է՝

1. ԼՂՀ ոստիկանության մարմիններ - 119(223)
2. ԼՂՀ դատախազության մարմիններ - 12(7)
3. ԼՂՀ դատարաններ - 51(60)
4. ԼՂՀ ԿԱ ՀՊԾ - 9 (7)
6. Այլ մուտքեր - 23 (25)

Նշված մուտքերից առանց կատարման հետ են վերադարձվել նախաձեռնողներին 6 (6) մուտք՝ միջնորդության չբավարարման, նախաձեռնողների կողմից համապատասխան գրությունների հիման վրա՝ առանց կատարման՝ հետ ուղարկելու պահանջով և համապատասխան փորձագետի բացակայության պատճառներով:

Ավարտվել և նախաձեռնողներին են վերադարձվել 185 (295) մուտքեր, որից 1-ը՝ (19) համալիր, 25-ը՝(10) հանձնաժողովային, իսկ 160-ը՝(266) միանձյա:

Եզրակացության տրմամբ ավարտված փորձաքննություններն ըստ տեսակների և քանակի ունեն հետևյալ պատկերը.

1. ձգաբանական -14 (3)
2. ձեռագրաբանական -16 (24)
3. կենսաբանական -9 (7)
4. շինարարատեխնիկական -80 (70)
5. փաստաթղթաբանական -6 (4)
6. հետքաբանական -2 (1)
7. սպրանքագիտական -72 (160)

8. տնտեսագիտական -26 (21)

9. ֆիզ. քիմիական - 4 (8)

10. ավտոտեխնիկական - 11(16)

Դատական փորձաքննությունների լաբորատորիայի փորձագետներն ուսումնասիրել են 1980 (2663) օբյեկտներ:

9. ԼՂՀ պետական արխիվ

Հաշվետու ժամանակաշրջանում որոշակի աշխատանք է տարվել փաստաթղթերի հաշվառումը և օգտագործումը կատարելագործելու ուղղությամբ: 2012թ. հաշվառման է վերցվել 377 (371) ֆոնդ:

Հիմնարկ-ձեռնարկություններից և կազմակերպություններից ընդունվել է 2353 (2495) գործ, որից 480 (603) գործ՝ մշտական պահպանման, 1580 (789) գործ՝ անձնական կազմի, 293 (330) գործ՝ ժամանակավոր պահպանման:

Տարվա ընթացքում փորձաքննությամբ արժեքավորման է ենթարկվել 1962 (5985) գործ, որից ցուցակագրվել է մշտական պահպանման 217 (4792) գործ, անձնակազմին վերաբերող 885(585), իսկ 860 (199) գործ առանձնացվել է ոչնչացման համար:

Մեթոդական և պրակտիկ օգնություն է ցուցաբերվել գերատեսչական արխիվներին՝ նրանց արխիվային փաստաթղթերի պահպանման պայմանների հետագա բարելավման նպատակով:

ԼՂՀ տարբեր շրջաններում բնակվող քաղաքացիներից, օտարերկրյա քաղաքացիներից և տարբեր կազմակերպություններից ընդունվել է սոցիալ-իրավական բնույթի 1027(1210) հարցումներ:

Տվյալների էլեկտրոնային շտեմարանի հագեցման, վերջինիս տեղեկատվական –որոնողական հնարավորությունների ընդլայնման նպատակով թվայնացվել է 32606 (27618) արխիվային փաստաթուղթ, 10886 (13861) անձնական քարտ:

Կազմավերականգնողական լաբորատորիայում վերականգնվել և վերանորոգվել է 2080 (2562) թերթ, կարվել՝ 4396, կազմավորվել՝ 780 գործ:

Հաշվետու ժամանակաշրջանում անց է կացվել փորձագիտական հանձնաժողովի 4 (5) նիստ, որտեղ քննարկվել և հաստատվել են 136 (144) ցուցակագրություն՝ 6107 (6670) միավոր պահպանվող գործերի ընդհանուր քանակով: